



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltin
1586

1999

ԱՐ-ՔԵՍ



Աշխատասիրութիւն

ՄԵԿՆՈՒԵՆԵԱԼ

ԱՅԼ-ՇԻՐԻՆԻ

(Երկրորդ առաջնորդութիւն .)

Ltn
1586


ՕՂԻՑԻ

Աշխատասիրութիւնցի ապահովագույն մ.

1891



ԱՐ-ՔԱՐ



Աշխատասիրութիւն

ՄԵԿՆՈՒՅԵԱԾ

ԱՅՆ-ՃԻՐԻՆԻ

(Երևան պատկերավորութիւն)



ՁԱՅՆ

Ալբագան Մահմետ-Յակովեանցի ուղարանունը:

1891

Дозволено цензурою Тифлисъ, 26 октября 1890 года.

Типо-Литографія А. М. Мугдусіаконова, въ Шушѣ.

28 1592

41586-68



Ի սկզանք առնելով արդի Եւրոպական աշխաց ճամանակի համար և առաջ առաջ մատուց աշխատաց էնք ենք ոչ շագանական գեղեցիկ հետեւ նոյն բայց բայց բայց մատուց էնք որ Եւրոպական գրագետն իւր առաջ բայց մատուց առաջական համապատասխան գեղեցիկ և իւր աշխացին ճակա գրապահան, որի մէջ նու հարու և առաջական իւր և ունենալ շրջապատճեց աշխաց ամբողջ հետաքան, որով ինչն իւր արդամանը աշխատաւեամբն էլ յատելու մէ չափ հապարփեր առան ճամանակարանին գերաց: Բայց ի՞նչ պիտի առե կեղծ Հայ—գրագետն որ սուրէ մերուեւեալ մշջուներոց մէջ դժուարութեամբ հաղող հարուցան է գոտել իւր յանձնաց մէջ ինական իւր, այս ևս՝ հաշուած և յեզր բաժին եղած. անշուշտ պար չէ նուև մէր աշխացին շրի եկած երգերի և աշխատաւեամբների լիւն, որու գոյութեանը անյեպահան յատիպահան ճամանական մէջ:

Ուստի՝ Աւել մէ անհանա գիշե մէ կոււ առնենամ նսուած, Բայց անհարու եղայ անպարբեր աշաւ նոյն շատաւի երեսնեն, և երբ Հայ—հապարփեամբան իսպահ փափագ պէսայ, առնենալ բայտական պարիներ տառած հարապարփառած, „ԱՅԾՂ-ՑԻՐԻՆ“, Տաշանուանեալ Հայ էրդէ տառնեն, հայտառաւ իմ պահութեան և աններելի հանգամանքներին յետ արդիւյն հրապարփառամբան յանձնել այն աշխատափարաւեան երթորդ պարգրութեան: Երեսոյն խուլարքութեանից յետոյ Հայուի հարուցան գոտել մէ օրինուի Տաշուած գրելե ոշնչացած: Բայտական դժուարութեամբ պարգրեցին, որի վերայ առելոցը նուև մէջ ինակ դուրսերը գոտուած մէ չափ հապարփառ գրամածները, իրեն լուծացելով շայն հապարփեամբան: Երբ գոտեմ իրակեց յայնժամ ոկտի ջանամ յատաջ պատել գործն այլ օդապահը հրապարփեամբեաներով:

Հրապարփան Զ. Սարգսոսն.

1890 յուլի 15
Ամազոսը.



ԵՐԳ Ա. ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԱՐՄԿԱՆ.

Մնացիր խաղաղութեամբ՝ ովկ իմ հոգի ջան սիրելի,
Այսօր ինձ տուր ձեռովդ՝ բաժակ անջատման սիրելի,
Սէրի ծովումն եմ էլած, նաւ ալեկոծման սիրելի,
Կենդանի ջոկնուիլը՝ նման է մահուան սիրելի,
Երկու մեծ լուսաւորքն ինձ, խաւար փոխեցան սիրելի,
Երկու կամ երեք տարին, մեզ լիցի պայման սիրելի,
Չխախտվենք՝ միայն սիրով լինենք բաւական սիրելի,
Մինչի կըկին տեսութեան Տէրն անէ արժան սիրելի:

Խնդրում եմ այսուհետեւ, համարձակ ման գալ չունենաս,
Անմտին աննամուսին երբէք մտիկ տալ չունենաս,
Խորամանկ քաղցրաբանին, խորհուրդ տալու հալ չունենաս,
Անվայել բարեկամի՝ տուները երթալ չունենաս,
Քու վիճակէն գոհանաս, բարձրութեան ցանկալ չունենաս,
Աղքատութեան միջոցէն տրտմիլ նեղանալ չունենաս,
Նամակով կամ լիշելով՝ ինձի մոռանալ չունենաս,
Ինձ լսես չես ունենալ, ստոր աստիճան սիրելի:

Քեզանից բաժանվելով, հեռու տեղեր պէտք է գնամ,
Քաջ սէրդ միտ բերելով լատուկ քեզ ինձ մօտ իմանամ,
Լսելով պարզ անունդ, քեզ ինձ տուողէն գոհանամ,
Հարազատ բարեկամով՝ սիրոյ նամակդ ստանամ,

Ել ուրիշ սէր չճարեմ՝ շուտ քեզի դառնալու ջանամ,
Մահէն Աստուած խնայէ, մինչ տեսութեանդ արժանանամ,
Փոքր ինչ ապրուստ տալ Տէրս՝ որ կարօտութիւն չունենամ,
Վայելենք այնուշետև, վիճակ քաղցրութեան սիրելի:

Անթարշամեալ սէրերով, վայելենք վիճակ միասին,
Ազնիւ սէրն ունենալով անխախտ և անքակ միասին,
Վայելենք էս աշխարհու, երկար ժամանակ միասին,
Ոչ, ստոր անուն թոգունք՝ ոչ թերի փափագ միասին,
Չարակամ ոստիներին կանգնենք հակառակ միասին,
Աւետարանը ունելով, մեզ կենաց մուրհակ միասին,
Հոգիէն նորոգվելով՝ կազմենք նպատակ միասին,
Շիրինի խնդիրը իր տիրոջմէն ալոքան սիրելի:



ԵԲԳ Բ. (Դաշնութիւնն է Լեռոյ հրանտան.)

Պէտք է խնդրենք և աղօթենք՝ միշտ բարի մահուան համար,
Կայ երկրորդ մահ՝ ոչ թէ միայն աշխարհի մահուան համար,
Մահն Աղամէն մինչև ալսօր, մեր կենաց հետ կովում է,
Ուրեմն ով մարդ, մի մնալ անզէն՝ անարի մահուան համար:

Տարեկանէն մինչ ի հարիւր ամեալ մարդիկ բազմաթիւ,
Չգիտես արդեօք կան վճռված, էս տարի մահուան համար,
Չարմանալի բան է, որ քեզ՝ մինչև այժմուս մահն եթող,
Քեզ էլ միտ բեր, երբ որ ցաւիս՝ օտարի մահուան համար:

Բացի սրտէն մարդուս մէջը, մահն օթեան մը չունի,
Աշխատէ, որ սիրտ չունենաս՝ խաւարի մահուան համար:
Խորհրդով օձ, բանիւ Եւալ, գործով Սդամ խիկ և խիկ,
Ես դատաւոր ալրի անբախտ, անճարի մահուան համար:
Շիրին՝ Փրկչիդ մահն յուսալով, մահէն երբէք մի դողալ,
Գու կեանք ունիս այն անարատ՝ արդարի մահուան համար:



ԵԲԳ Գ. (Մ ու Ի ու Տ Բ ու Վ)

Երեկը, ինձի ալսօր՝ թըլվում է երազի նման,
Օրերա՝ տարիներա անցնում է վռազի նման,
Աշխարհիս փառքը բոլոր՝ կարծվում է տնազի նման,
Մէկ ըստէ չէ մնում, սահմանումը սազի նման,
Մենք վազող ջուր սրբնթաց, ինքն է աւազի նման:

Դատ առաջ աշխարհը մեզ, դատարկ մէկ յոյս տալ կ'ունենայ,
Երբեմն մեզ կ'լսէ, հոգ տանելու հալ կ'ունենայ,
Եթէ քիչ բախտ ունեցար՝ քեզ մօտ գնալ՝ գալ կ'ունենայ,
Իսկ թէ ոչ, քեզ յաւիտեան թողուզ մոռանալ կ'ունենայ,
Հաստատ յուղ մաշելով՝ կը թողալ մէկ մազի նման:

Իրաւի աշխարհը մենք, մեր հեար մէկ բան չի բերինք,
Հալրերիցու չծնած ատենը, մենք ինչի՞ տէր ինք,
Երբ ծնանք, էն ըստէին՝ մեզ մահի մօտ գրաւ գրինք,
Սրբութեան բարքիցը զուրկ, և բարութեանն աննըլէը ինք,
Մեղսասէր սիրտ ունէինք, այն թիւնաբեր վազի նման:

Խոնչ էր, որ մեկնաբանեց Փրկչը հրէից իշխանին,
Ասելով. թէ մարդիկը, պէտք է վերստին ծնանին,
Հոգւով աչքով նախում եմ, էս ամենաշահ հրամանին,
Հուսկ լետոյ մտիկ տալով, ինձ պէս չարացեալ արձանին,
Մինչ անուշ կեանքիցս էլ, դառնում եմ օդ կազի նման:

Քեզ ասեմ, էս անցաւոր վիճակի որ հալն է լաւ,
Մարմնեղէն կամքի նաև, աշխարհի թող տալն է լաւ,
Քեզ միայն իւր մահովը, փրկողին յուսալն է լաւ,
Էլ ուրիշ լաւ չկալ, բայց լաւ սիրտ ունենալն է լաւ,
Շիրինը սուրբ ժողովոյս մէջն է նուազի նման:



ԵՐԳ Դ. ԳՈՎԱՍՍՆՈՒԹԻՒՆ.

Հոգի ջան նոր բաց էլած, վարդ մանուշակ ես ինձ համար,
Զեմ ուզիլ լոյսն արևու, դուն արեգակ ես ինձ համար,
Անմահական ջուրերով, լեցոն բաժակ ես ինձ համար,
Պատուական մարդարիտով, կազմած պսակ ես ինձ համար,
Դու Զինաստանու եկած, թանգագին ակ ես ինձ համար,
Բաց՝ ի քէն բաժին չունիմ, այլ դու մենակ ես ինձ համար :

Զեմ տեսած, չեմ իմացած՝ գեղեցկանման քեզի պէս,
Կարծում եմ գեռ չէ ծնած բոլոր Վրաստան քեզի պէս,
Ոչ Հայաստանումը կալ և ոչ Ոռոսաստան քեզի պէս,
Մինչ Եղեծն էլ չի էլած, հոտով բուրաստան քեզի պէս,
Վերջապէս զարմանալի՝ մին օրինակ ես ինձ համար :

Մէկ բոպէ տեսնողդ, հարիւր տարի կեանք կ'ունենալ,
Մերձ ի մահ ըլնի էլած, կենդանութեան ջանք կ'ունենալ,
Քեզ ունենողը, իրան ժամանակին թանգ կ'ունենալ,
Գովացողդ քեզանից՝ մինչ այսքան հրամանք կ'ունենալ,
Որ ասի, բախտով կուր եմ՝ դուն աշտանակ ես ինձ համար :

Յոյս տալով, մօտ չի գալով կենդանութիւնս մաշեցիր,
Շատախօս բիւլբիւլ արիր հանդարտ անունս մաշեցիր,
Յոյսերս զբեցիր՝ խարիսխ ու սիւնս մաշեցիր,
Անիրաւ՝ մինչ սիրովդ սիրտ ու արիւնս մաշեցիր,
Ուրեմն՝ անհանդչելի, անդութ կրակ ես ինձ համար:

Խնդրում եմ՝ աղերառում եմ ինձ քեզանից եադ մի անիլ,
Ինձ թողալով, ուրիշի խնդռթիւնը շադ մի անիլ,
Նոր բացած վարդ երեսդ, փուշին համեմատ մի անիլ,
Քու Եիրինդ եմ սիրոյ գերի, քեզանից զատ մի անիլ,
Թէ լսես աղերսանս, կենաց մուրհակ ես ինձ համար :



ԵՐԳ Ե. ԳՈՎԱՍՍՆՈՒԹԻՒՆ.

Ել քեզ գովեմ քոյր տիկին գեղեցկազարդ նշան ես,
Համալին Հայաստանումը մէկ հատ ես, աննման ես,
Թէւ Ասիա ծնուած ես, բայց իսկ Եւրոպական ես,
Համեստ, խոհեմ, մարգաշահ, քաջագով, քաղցրաբան ես,
Դու զմըսւխտից թանգագին՝ մարդարտից պատուական ես,
Քեզ քաղաքական վարուք, մըքան գովեմ արժան ես:

Լի արշալոյս խնդառիթ՝ ավ դու ծաղիկ անթառամ, քու
Գեղածիծաղ քաղցրախօս, շքեզամլանծ յարաժամ, քու
Գեղեցկութիւնդ արգելող, արեգակն անխնամ,
Ով գու լուսին թագուհի՝ և աստեղաց բարեկամ,
Արարչարար պատկերդ՝ զարմանալի մի անգամ,
Զինաստան մեծ աշխարհը, ունքերիդ գին սիէտք է տամ,
Թարթափով երկարի սուր, աչքերով հոգեհան ես:

Իսկ դու ազնիւդոհմէ ես՝ անբիծ անուններ ճարող,
Շնորհաբուզի ձեռքերդ՝ կարեր, ձեեր յարմարող,
Եւրոպական կանոնով, ստու սեղան զարդարող,
Ամենալիւ կատարեալ, իսելամուտ կառափարող,
Դեռ զի ասած մէկ բանը՝ շուտով առնող կատարող,
Վարդ, լիլիֆար, համասփիւռ, գեղատու բալասան ես:

Սիրամարդի կերպ ունիս, քաղցր լեզուդ մին սոխակ,
Քաղաքական մտքերով զարմանալի հեղինակ,
Իշխանուհեաց ողջ խմբին, դու ցանկալի օրինակ,
Բաւականին լեզուագէտ, Հայոց, Վրաց՝ ոչ համբակ,
Մարիամին, Մարթալին՝ հաւատքով ես հպատակ,
Քեզ՝ քաղաքիդ փրկելու համար Յուղիդ կը նմանես :

Ազնիւ գեղեցկութեանդ, ոչ ոք նման չի լինիլ,
Եթէ ման զան քննելով սաղ Երևան չի լինիլ,

Եիրակվանիցն սկսած, մինչ Վրաստան չի լինիլ,
Վարշաւ, Գրիգորապօլիս, Նոր-Նախիջևան չի լինիլ,
Թէւ շատ կան, բայց մտօք՝ քեզ համանման չի լինիլ,
Գարունդ քիչ անցնելով, ամառվան բուրաստան ես :

Բարեբեր արմատ տիկին, գեղեցկութիւն շատ ունիս,
Քաղաքական վարք ու բարք, թանգ կեցութիւն շատ ունիս,
Զգոյշ կենալուդ համար՝ վայելչութիւն շատ ունիս,
Ազնիւ տանէ աղախնեալք, դուն ձեռասուն շատ ունիս,
Հոգ տանելով անճարից, լի բարութիւն շատ ունիս,
Վաղարշապատ մեծ լինիո ընծալ, նոր արմադան ես :

Էս դուզնաքեայ նամակս, մնալ առ քեզ անմոռաց,
Լսելու՝ միտ առնելու համար սրտիդ դուռը բաց,
Գիտէի, որ հանճար ես՝ միանգամայն գերիմաց,
Զի խնալեցի էս մասին՝ գովք գրելով քորդ փառաց,
Ազնլունի մօրից ծնած, մալր գեղազարդ դստերաց,
Ծովէն ճարած մարդարիտ, արժող կէս տէրութեան ես :

Թղվին հազար ութ հարիւր, լիսուն երկու տարումը,
Դու մին ծաղիկ բաց էլած, Հայաստան աշխարհումը,
Էն գովքն ասի քեզ համար, որ կալ քու յարմարումը,
Արժան է մինչ սա գրել՝ կտղէթայից շարումը,
Քեզ առաջնորդ ասել, գովելեաց համարումը,
Եիրինի ասութեան չափ, իրաւի գովական ես :

ՀՅ

ԵՐԳ Զ. (Մուլուս Տիգան.)

Քու մասին, իմ աչքի լոյս, ինչ ասում եմ՝ լաւ եմ ասում,
Ցաւում եմ՝ ափսոսում եմ, ունելով իրաւ եմ ասում,
Ամեն տեղ, ամեն բանում՝ քեզ քաջահամբաւ եմ ասում,
Քու խորհուրդը ամենի մօտ մի անիլ չաւ եմ ասում,
Քու անզգոյշ մնալու, ինձ համար մեծ ցաւ եմ ասում :

Դանձը ժանդի համար է, մարդուս անունն է գովելի,
Բարի ընթացքը՝ կատարեալ կեցութիւնն է գովելի,
Անունի տարածվիլը, անհատ արդիւնն է գովելի,
Դու մի կարծիլ՝ թէ միայն գեղեցկութիւնն է գովելի,
Պակասամիտ սիրունին, ես մին դատարկ գաւ եմ ասում :

Բայց ասեմ՝ գեղեցկութիւնն Արարչի մէկ պարգևըն է:
Հողանիւթ գոյացելոց, մէկ բարեբեր անձրեւն է,
Բայց շուտով կը թարշամի, արմատը չէ տերեւն է,
Գիտութիւնն ով աչքի լոյս, մարդուս երկրորդ արեւն է,
Ոչ գիշեր կ'ընդունէ, ոչ կը սիրէ սեաւ եմ ասում :

Ինձանից միտք ծախու առ՝ անհոտ բուրաստան մի լինիլ,
Խրատի միշտ կարօտի, շատ ինքնահաւան մի լինիլ,
Դու բարւոյն լեր փափակող, չար սովորութեան մի լինիլ,
Անվայել լուր մի հանիլ՝ կամ վատաբերան մի լինիլ,
Մի թողուլ թանգ օրերդ վատ կեցութեան գրաւ եմ ասում :

Գիտում եմ, որ յարգի է իմաստութեան քարը քու մօտ,
Շատախօս չի երեխիլ, ինձ նման անճարը քու մօտ,
Տեսնում եմ շնորհաց սգին, և գիտութեան բարը քու մօտ,
Ամենեւին չեմ ուզում՝ որ զօրանայ չարը քու մօտ,
Ես Եիրինս ահա քեզ խորհուրդս լեզուաւ եմ ասում :



ԵՐԳ Ե. (Ա. Չ Տ Ա. Յ.)

Սկիզբն Աստուած, հալր Աղամին ստեղծեց,
Ասաց լինիլ անմահ՝ պատուիրանապահ,
Թէ պատուիրանապահ լինէր զրախտին,
Նա կ'ստանար մեծ շահ, անանցաւոր գահ :

Դահ էր նրան՝ այն ինչ դրախտն Եղեմ,
Օթեան պանծալի, փառաւոր վսեմ,

Հողանիւթէ էակիս՝ բանսարկուն ընդդէմ,
Հագաւ օձի զբահ, պատրեաց անխնայ:

Անխնայ խաւարին ծախվեցան նրանք,
Եին ալեկոծեալք, չէին անվանդ,
Վեցերորդ դարումը ինչ մենք ունեցանք,
Եիրին, այն իսկ էր ջահ՝ կարասի և կահ:



ԵՐԳ. Բ. (Մ. 1 - ի ա 5 բ. 2.)

Ինչ մարդ սրտով սիրած սիրական չունի,
Կենդանութեան հետ նա երբէք բան չունի,
Սմենեին վիճակ խնդութնան չունի,
Կատարեալ յոյս, հանգիստ օթևան չունի,
Սէր հարուստ պատմելու բերան չունի,
Չունի մի անգամ, սոքա համայն չունի:

Էն յարաժամ բախտիցը գանգատ ունի,
Արտասուելէն աւելի էնչ զատ ունի,
Ինչ որ ունի՝ բոլորն անհաստատ ունի,
Մէկ օրը, մէկ տարու համեմատ ունի,
Ողբ, աղաղակ, քանի ասես, շատ ունի,
Բայց ուրախութեան մէջը սահման չունի:

Նա կ'սկսի իւր անձին վայ տալը,
Խելագարի, տարուածի պէս ման գալը,
Զի պակասիլ ոչ բողոքը, ոչ լալը,
Կ'անցնի շուտով՝ նրա գարնան մըհալը,
Տերեն իրմէն կ'սկսի յետ կենալը,
Կ'իմանաս, որ ծաղկելու նշան չունի:

Միտ բերելով իւր սգալից վիճակը,

Նկատելով երեսնամեալ հասակը, լաւ նկար բայ լուսով
Ի՞նչն է սուղ, եթէ ոչ ժամանակը, ոչ մերան քայլուածը
Որ նա ունի բոլոր մարդոյ փափաղը,
Կարդացէք այս իմ նորալուր նամակը, և առա մուսնի
Թանգ գին ունի լաւ սէրը՝ էժան չունի:

Ով ճարելու կամք ունի նոր սիրական, գալիք լուսնի
Թող չի խարվի լեզուի ու գեղեցկութեան.

Հոգին ճանաչի, յետով սէր տայ նրան, և առա մզրան
Որ չը լինի վերն ասած մարդոյ նման, ու ոչ ոչ զայ
Ես Եիրինս, մէկ սէրի եմ սիրաբան, ոչ ոչ աղջաւծնի մեծացը
Աշխարհի է, բայց իրաւ վախճան չունի:



ԵՐԳ. Թ. ՅՆՈՐՀՅ և ԲԱԽՏ.

Առարկայ բաց, արին Յնորհյը ու բախտը,
Խօսել սկսեցին իրար հետ ներհակ, ու գանձը
Բախտն ասում է, դու ուր էիր էն վախտը,
Որ ես էի Յաբեղեան տոհմին աշտանակ:

Յնորհյն ասում է, ով բախտ, ինչ ես, կամ ուր ես,
Թէ մին յայտնի բան ես, արի երեակ. Յնորհյան որոշը
Փոքը ինչ խոր նկատեմ կարծեօք դու կուր ես,
Զիարդ լինիս Հայոց լուսատու փալլակ:

Բախտն ասում է, ես շատ ցաւի գեղ գիտեմ,
Եւ ինձ աշխարհումը միշտ շքեղ գիտեմ,
Քանի շնորհալի մարդու տեղ գիտեմ,
Ոչ տանն ապրուատ ունի, ոչ գլխին գդակ:

Յնորհյն ասում է, մէկին արիր բարեբախտ,
Ալսինքն՝ Աղէքսանդր քաջութեամբ անխաղթ,

Սրանով քեզ կարեմ ասել ապերախտ,
Երիտասարդ մահին չտուիր ժամանակ :

Բախտն ասում է. փոքր ինչ նայեմ աղքատին,
Խղճալի ապրողին, կամ յուսահատին,
Էնքան կը մեծարեմ մինչ կալսեր մօտին,
Ունենայ փառք, պատիւ, պարծանաց պսակ :

Շնոհքն ասում է. այն ունիս էդ բանը,
Բայց կոյր ես, չես աեսնում պատւոյ արժանը,
Երբեմն մեծասիրտ ինքնահաւանը,
Քեզանով է բարձրանում, ով դու անառակ :

Բախտն ասում է. ես եմ մէկ փառք ու պատիւ,
Մարդկան սեռի վերայ երախտիքս անթիւ,
Ես եմ Աստուածանից մէկ ընծայ ազնիւ,
Թէ գրեանք, թէ գիտունք՝ չեն ինձ հակառակ :

Շնոհքն ասում է, լանկարծ Սուրբ գիրքն բացայ,
Ծննդոցէն, մինչ յայտնութիւնն ընթերցայ,
Բախտ անունով պարզե երթէք չիմացայ,
Մարդոց սահմանած ես, խաբերայ նամակ :

Բախտն ասում է. Արիստոտէլ, Պղատոն,
Ինձ համարեցին մէկ ծաղկեալ Գալիսոն,
Թէ ինձանից մասնաւոր ունենար Սամսոն,
Զէր ըմպիլ յամբոխէն զուր մահու բաժակ :

Շնորհքն ասում է. չունիս ալդքան հրաման,
Զիարդ կարես լինիլ արգելող մահուան,
Բայց թէ լեալ էի ես պատկարահան,
Քեզ կը նկարէի կնոջ օրինակ :

Բախտի ու Շնորհքի դաւին վերջացաւ,
Դրեթէ Շնորհքէն Բախտը վախեցաւ,
Էս անբախտս բախտին Բնչպէս ասեմ լաւ,
Օրերս է անց՝ բախտն ինձ չտուաւ վիճակ :

Ես Շիրին Աշբադ՝ չեմ յուսով կորուստ,
Ունիմ Աստուածանից մասնաւոր ապրուստ,
Երանի. շնորհքով քիչ լինիմ հարուստ,
Թող չուխէս հին ըլնի, լափչիքներս ծակ :

ԱՐԴ Ժ. ԿՈՐԱԾ ԵԱՓԵՆԳԻՆ.

Աղա Զոհրաբ Վասիլեանը զապիսկայով ինձ տարաւ,
Դեռ մէկ օգուտ չի տուած, շուտով եափընջիս կորաւ,
Էս քէփը իր տանը չէր՝ ալլոց լաւութիւն արաւ,
Տեսայ որ ինձ բերողը, Քեալովենց տունը բերաւ,
Մեզ ինչ բանի կանչեցիք՝ մօտիս մարդը հարցրաւ,
Հարսանիք է, ասելով, ձեռքը շարժեց՝ զոհացրաւ :

Եափընջիս ու լափչիքս կառավարչին պահ տուի,
Հինգ հռամամբուշէլ նրան կաշառք ասի, շահ տուի,
Տեսայ քիչ գարդիմանդ էր՝ արեցի թամահ, տուի,
Եղբայրաբար էրք արի, մասնաւոր թամբահ տուի,
Կորչի քեզմէն կ'ստանամ, մէկ կողմիցն էլ տհ տուի,
Էդ մասին անհոգ մնա, յոյս տալով ինձ՝ վերցրաւ :

Թառն ու քէմանչէն ձեռիս մտանք ժողովարանը,
Ընտեղ էր Երևանու Հայոց բոլոր եշխանը,
Տեղ ցոյց տուեց, բարովեց վերովիշեալ Վասիլեանը,
Բայց Իսակ Արտեմիչը թամադա էր էն տանը,
Քեզ համա փող մօտ կ'անեմ, երդուելով պայման դրաւ :

Բազմութեանը դամ արԵ՝ սաղ գիշերն անդադար,
Մին չաշկալ չալ ստացալ, ջուրն սպիտակ, անշաքար, Հեյծի
Խանանդա բերել տուին, ինձ կարծելով անյարմար,
Մէկ նավա ասել տուի, տեսալ որ էր անկատար,
Քիչ գեղ ունէր, հաղացրին՝ փող ժողովեց ինձ համար,
Թամադիս մեծ լոյտ տալը, տասն աբասի փող գառաւ:

Պսակէն երկու սըհաթ առաջ էր, որ հայ կերին, Հայոց
Յետոյ տարան, զուգեցին հարսն ու փեսէն տուն բերին,
Մի մին բակալ շամպանսկիով բազմութիւնը դուրս արին,
Ինձ էլ իմաց անելով, լափչեքս առաջ բերին,
Ասի՛ եափընցիս ուրալ: Էն անմիտ կառավարին,
Ասաւ՝ բիւրաւորք կալին, ինչ գիտեմ ով թոցրաւ:

Մազերը թուխ եափնջուս, խիստ լաւ նուրբ քեչա ունէր,
Ութ մանէթից աւելի արժողութիւն սա ունէր,
Ճիտ քցելու զալթանի տեղը քեալազա ունէր,
Կանաչ լանքա սստառով թիֆլիզու բաֆթա ունէր,
Զաչանէն մէկ էր եկած, ծիլերը բուռմա ունէր,
Դարտիմանդի բաշխած էր, ինքը գառ և ոչ պառաւ:

Քիչ ման եկան՝ չգտան, ասին՝ գնա քու բանին,
Տասն աբասին մուֆթա չէր, համարի քու զիանին,
Քարտաշովն՝ Արզանովը՝ ներկալին էս պայմանին,
Յոյս գըրի ինձ իմ տեղէն բերող մարդու հրամանին,
Որ բերել էր Գալրիէլ Վարդանեանի խրախճանին,
Կեանք տալ Աստուած հալկազուն Պօկուրօր Վասակեանին,
Տէր կանգնելով Նիրինին՝ մէկին երկու փողն առաւ:



ԵՐԳ ԺԱ. Ի ԴԻՄԱՑ ԲԻՒՐԻՒԼԻ ԱՌ ՎԱՐԴՆ.

Բացուի՛ր, նազելի վարդ, ահա գարնան ժամանակ է,

Քոյ բացվելու համար բոլոր աշխարհը փափագ է,
Բիւրեիւլը տառապեալ՝ բաւէ—այսքան եղանակ է,
Պարտիզպանը սուդ նստեալ է, բուրաստանը փակւէ,
Սնքակ սիրովդ խղճալին մինչ երբ աղաղակէ,
Բիւրեիւլի քո մօտ կարդալը դիմ սիրոյ նամակ է,
Բացուի՛ր քոյ հոգին սոխակի շնչին հպատակ է:

Սարերը նորոգվեց՝ վասն է՞ր չես բաց էլել դու,
Ծաղկով բաղը լրցվեց, վասն է՞ր չես բաց էլել դու,
Համասփիւռը բացվեց, վասն է՞ր չես բաց էլել դու,
Նուշանը տարածվեց, վասն է՞ր չես բաց էլել դու,
Գարնան գուռը գոցվեց, վասն է՞ր չես բաց էլել դու,
Բացուի՛ր, իմ անուշ, քեզանում այդ ի՞նչ նպատակ է:

Վարդ բառբառելով խղճալի կեանքը նրա մաշվեց,
Սուսերի սիրովդ՝ համարեա կենաց ծառը տաշվեց,
Յոյսը վերացաւ, սրտի էլած արիւնը քաշվեց,
Կիզող կարօտով իր բոլոր ստամոքսը խաշվեց
Քոյ թարշամելէն մինչ քոյ նորոգման օրը հաշվեց,
Բայց վայ նրա աշխատանացը, գուր սիրոյ տակ է:

Բացուի՛ր, նկատի՛ր բիւրեիւլի տասն և մէկ ամիսը,
Խաւար մի՛ փոխիր խղճալու բոլոր բարի լիսը,
Եղպէս մի՛ անիլ, վարդուհի, անցնում է մալիսը,
Յոյց տուր արևեդ՝ ահաւասիկ մերձ է լունիսը,
Խղճա Արամիս, ով գու Արմաւերա դիսը,
Հալսստանդ ամոկի տակին առանց արեգակ է:

Բացուի՛ր դու շուտով, մէկ փոքր լոյս տուր սիրահարիս,
Աղնիւ սիրովդ մի՛ չարչարիլ զուր սիրահարիս,
Մերթ արտասուալից, մերթ ճարակտուր սիրահարիս,
Տուր արշալուսին միջովը մէկ լուր սիրահարիս,
Ընթերցաբանող զինի, ասես, կուր սիրահարիս,
Սեաւ բախտը, Նիրին, բիւրեիւլի վարդին օրինակ է:



Բնական չար եմ,
Անլոյս խաւար եմ,
Ի՞նչ ապաշխարեմ,
Չեմ նոր արարած,
Անզրոյց ձայն եմ,
Անսուտ ունայն եմ,
Մարմին միայն եմ,
Լոկ մարմնից ծնած,
Էակ չարութեան,
Եւ ոչ բարութեան,
Թէ ում եմ նման,
Գիտեմ անկասկած,
Մահն ի՞նչ է, ասեմ,
Ես մահացու չեմ,
Նորէն ինձ լայնեմ,
Հիմ լայնատարած:

Ծառալ ինքնակամ,
Եւ տէր անխնամ,
Ատող լարաժամ,
Իրաւն ու բարին,
Սրտով՝ վիճակով,
Կամքով փափագով,
Ամեն տեսակով,
Ծախուած աշխարհին,
Լոյսին չնայող,
Եւ միտք չընծայող,
Կամաւ ծառայող,
Անզերծ խաւարին,
Քողով կորստեան,
Ամպով մթութեան,
Միգով թանձրութեան,
Պահուած թագուցած:

Ասեմ՝ հրամայեմ,
Ալլոցն ընծայեմ,
Բայց ինձ ոչ նայեմ,
Ոմանց տամ խրատ,
Ուղիղ պայմանին,
Անսուտ հրամանին,
Կենասդու բանին,
Կամ անհամեմատ,
Անարդ և խոտան,
Թերի անպիտան,
Պտուղ գառնութեան,
Արմատ անհաստատ,
Մտքիս խորանը,
Հշտեմարանը,
Բոլոր սահմանը,
Խաւար թանձրամած:
Պարսաւեալ վարքով,
Ատեցեալ բարքով,
Անյարդի փառքով,
Խաբված կ'նմանիմ,
Արտիս փափագէն,
Գործիս թոշակէն,
Կամքիս մուրհակէն,
Զէ մարդ զելծանիմ,
Ինձ այս միջոցէն,
Հրացաւ բոցէն,
Ցաւալից խոցէն,
Փրկող մը չունիմ,
Փրկէ Շիրինին,
Քաւիչ Շիրինին,
Հաստիչ Շիրինին,
Միայն ես Աստուած:

ԵՐԳ ԺԲ. ԸՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՄԻՐԱԿԱՆԻ.

Մինչ Երբ, դու համասփիւր գովական,
Մինչ Երբ չի լսես իմ աղաշանս,
Աղէ գիթա իմ ամբախտութեանս,
Դիցուք՝ թէ դու ես իսկ հոգեհանս,
Գոնէ ժամանակ տուր մանկութեանս,
Կարծեօք՝ ձեռնդու չես օգնութեանս:

Ինձ ամուսին, անլոյս էր ես այդքան,
Սէրին գերի, ցաւին տէր ես այդքան,
Լաւ չէ սիրականին ներես այդքալ,
Երկար միջոցով համբերես այդքան,
Երբ տեսալ՝ դու վառաշէր ես այդքան,
Խոնարհեցայ ես ինքնահաւանս:

Դու անխնամ, անգութ, անիրաւ ես,
Շատ հոգիներ անշուշտ կը գրաւես,
Ոչ բարւոյ և ոչ սիրոյ ծարաւ ես,
Օրը հարիւրի մօտ կը կաքաւես,
Կարծել մի թէ գեղեցիկ ու լաւ ես,
Վարդիդ ահա պատմում է բերանս:

Զէ չէ, սիրուհի, մի' անիլ էղպէս,
Քեզ մի' թերամիտ անուանիլ էղպէս,
Մի ալլոցը միաբանիլ էղպէս,
Կամ սիրելու խնամ տանիլ էղպէս,
Երկար ատենով չեն լինիլ էղպէս,
Բերիլ մի' նեղութիւն՝ նեղութեանս:

Ի՞նչպէս չի ցաւեմ գեղեցկութեանդ,
Աղնիւ ու կատարեալ գիտութեանդ,
Ճարիլ չես ուզում համանմանդ,
Դեռ ագռաւըն ունի վարդարանդ,
Բաս ի՞նչ անէ սոխակ սիրաբանդ,
Չես ափսոսում Շիրին անուանս:

Ասում ես՝ աշխարհը դիմի ինձի գովական են ասում,
Չես իմանում՝ քեզանից ծածուկ հարիւթ բան են ասում,
Փոքը ինչ գեղեցկութեանդ համար սիրական են ասում,
Քու կամքդ գրաւելու մասին հոգի ջան են ասում,
Սիրում են մէկ ժամանակ ու սիրոյ արժան են ասում,
Բայց դիտունները ծանր բնութեանը իշխան են ասում,
Լեզուի քաղցրութիւնով խաբվողին անբան են ասում:

Մաշալէն փող չի անիլ — ոչ առնողին՝ ոչ ծախողին,
Մէկ կօպէկ չի աշխատիլ սա իրանով պարծենողին,
Շատերը մաշալլայով իրանց վիճակները թողին,
Չեռքդ առ մին հայելի, մտիկ տուը մտացդ քողին,
Քանի որ բարձրամիտ ես, նայի՞ր ոտիդ տակի հողին,
Հստ որում Սուրբ Գրքերը մեզ հոգէ աման են ասում:

Մաշալէն դու քեզ համար հաց ու կերակուր մի՛ անիլ,
Պարծանքով մի՛ կշանալ, պայծառ միտքդ կուր մի՛ անիլ,
Մի մտիկ տալ վատերին՝ թանգ անունդ զուր մի՛ անիլ,
Աստուածատուր երեսդ ըանդ ու դեղով սուր մի՛ անիլ,
Քեզ Անահիտ կուռի պէս ոսկիափետուր մի՛ անիլ,
Դիտեցի՞ր բարձրամտին նաւ ալեկոծման են ասում:

Միտքդ ամպով պատաժ է՝ լաւ ու վատը չես իմանում,
Շատի մօտ քի՛չ է երեսում քու շատդ՝ չես իմանում,
Ցաւողդ չես ճանաչում, հարազատդ չես իմանում,
Ցաճախ սիրվիլդ ես ուզում, թանդ խրատդ չես իմանում,
Էս մասին քեզ շատերը անհոտ բուրաստան են ասում:

Արի՛ անմիտ մի՛ լինիր՝ քեզ քոյ բարեկամն է լաւ,
Բարեկամի ունեցած մասնաւոր ինամն է լաւ,
Ուրիշի խաս շորիցը քեզ համար քոյ խամն է լաւ,
Ալլոց ալգուն մի՛ նայիր, քոյ մէկ ծառի համն է լաւ,
Շիրինի քեզ կամեցած օրն է բարի ամն է լաւ,
Ես քոյ համար ցաւում եմ, ալլքը զրաջան են ասում:

ԵՐԳ Ջ. Աստյանը ի հանդեպ Առաջ ոչ Գասկարէան չի լենիւ
Ալգերան ինչ ես անում, շամբը բուրաստան չի՛ լինիլ,

Օձի որքան գեղեցիկն ըլնի՝ սիրական չի՛ լինիլ,
Կատուին ուտացնես օրը հազար նազ ու նամաթ,
Տիրասէր և բարեսիրտ, յայտ է, իշը շան չի լինիլ:

Ագուափին շուշի միջում պահես շաքար ու նաբաթով,
Վատաբախտ բիւրիւլի պէս վարդի սիրաբան չի՛ լինիլ,
Մանկական ուսումն ունի միլիոնի չափ արժողութիւն,
Ալտակով մնուած տղէն առանց աստիճան չի լինիլ:

Ղուռանը ասում է, թէ ջաննաթումը շատ հուրի կայ,
Ինչ Վրաստանին է ջաննաթին էլ էնքան չի լինիլ,
Խաղողի վազովը շատ տեղ պարապած մարդ կայ — միայն,
Կարծում եմ, թէ ոչ մէկը բերզէն Ալեքսան չի լինիլ:

Շիրակայ չնաշխարհիկ գաշտն է լալիս աղիողորմ,
Ասելով, թէ սրբութեամբ ոչ տեղ Հայստան չի լինիլ,
Դու, Շիրին, օրը հարիւր քաղցը և ախորժ բան մտածես,
Քոյ Հայերէն խաղերը՝ Սէլեադի նման չի լինիլ:

ԵՐԳ Ջ. Ի հանդեպ՝ “Էշինյու ջունուն դասու գիշեր շերեն հոռ”
է ասում. պարոն Սիրին Բուրջու իսունին:

Քո սէլիրի կարօտովը՝ բիւրիւլի պէս տաղ եմ ասում,
Ո՛չ սէլր թող եմ տալիս, ոչ ինձի աւաղ եմ ասում,
Նոր բացուած վարդ երեսիդ, լոյս անշամանդաղ եմ ասում,
Մեղրաբուղիս պունկներիդ՝ ազնիւ ու շարմաղ եմ ասում,
Քաղցրաբան, ճարտարախօս, գեղեցկածիծաղ եմ ասում,
Քոյ հարիւր գեղեցկութեան մէկ մասն անջաղ եմ ասում:

Կարմիր վարդ ես, բաց էլած՝ հոտաւէտ անուշի նման,
Խօսքերիդ քաղցրութիւնը շաքարի կամ նուշի նման,
Զարդարվիլդ չափաւոր, ման գալդ զգուշի նման,
Քոյ սէրիդ կըռկումը՝ աղեղնաւոր եմ մուշի նման,
Մինչև երբ ինձի թողաս խելագար ապուշի նման,
Կամ մէկ անգամ սպանի՞ր, կամ արա չըալ եմ ասում:

Եա ես մին սոխակ պիտի՝ քեզ ինձ բուրաստան՝ ի արել,
Եա դու մին դուզի պիտիր, զաֆազադ ալվան՝ ի արել,
Եա ես մին զինւոր պիտի. տեղդ պարսկաստան՝ ի արել,
Եա դու մին քաղաք պիտիր՝ քեզանում օթեան՝ ի արել,
Եա ես մին չինար պիտի, ինձ քեզի պաշտպան՝ ի արել,
Եալ տալով չորս կողմից շաղալից եափրաղ եմ ասում:

Մի՛ թողալ ինձ սիրուհի՝ առանց տեղ ու ճար մի՛ թողալ,
Զուր յուսով ինձ մի՛ մաշիլ, փափազս անկատար մի՛ թողալ,
Կապերիցդ ինձ ազատի՝ երբէք ծածուկ լար մի՛ թողալ,
Յաւելու օրեր մի՛ տալ կամ քաշելու դար մի՛ թողալ,
Եթէ ինձ վատ ես գիտում, ել մօտդ իսպառ մի՛ թողալ,
Եթէ լաւ եմ մի՛ անիլ իսկի բեղամաղ եմ ասում:

Ինձ մտիկ տուր, որ ասեմ՝ թէ որն է սիրոյ բարին,
Են սէրն է, որ չի թողուլ կարօտ իրան սիրահարին,
Դու կարող ես՝ չես անում, գըտնըվում էլ չի աշխարհին,
Հազար ուժի հարիւր նա և լիսուն երկու լինէր տարին,
Որ էի գերդաստանով ես յԱլրարատեան գաւառին,
Եիրինըս, յԵրևան, էս խօսքը խանլըլքաղ եմ ասում,

ՑՐՒ ԺՒ. ԳՈՎԱՍԱՆՈՒԻԹԻՒՆ.
Նոր-Բէազիդ գաւառի ազնիւ ուսումնարանը,
Անստուէր առնել կարէ Գեղամեան Հայաստանը:

Աղա Բարսեղ Արծրունի, քաջահամբաւ իշխանը,
Կազմեաց հասատարմաբար ալս վերոյիշեալ բանը,
Զկամելով ամպ մնալ երբէք Յարեթեան տանը,
Արար ալս նոր շնորհաբուղս գիտելեաց վարժարանը:

Սա մայր ուսումնարանը շնորհալի մանկունք ունի,
Սիօնասուն ուսուցիչ՝ ազնիւ ձեռասունք ունի,
Մարդումը միտք երկնաւոր կազմելու մատունք ունի,
Քաղցը և ախորդ պառզներ, զանազան մատունք ունի,
Լուսաշաւիզ լուսամուտք, շնորհաբաշն դրունք ունի,
Լուսաւոր և անթառամ է սորա թափաստանը:

Զուարձացի՞ր, ուսումնարան, ջանք ունելով յարաժամ,
Արծրունի իշխանն ունի քեզ վերայ անչափ խնամ,
Ահա Վարդան վերստին, ահա քեզ երկրորդ Գեղամ,
Թարշամեալ ծաղիկներդ կամի առնուլ անթառամ,
Գեղարքունին մալլեցն կաթամբդ քոյ քաղցրահամ,
Մինչ չերևի կուրութեան, տրտմութեան պատմուճանը:

Զանք արա՛, ուսումնարան, Կալկաթալին նմանիս,
Ասիա միտքդ թող տալով, Եւրոպալին նմանիս,
Սովեստամիտ, հանճարեղ Զմիւնալին նմանիս,
Գիտութեան համբաւներով, մինչ Վէննալին նմանիս,
Աշխատիր՝ մանկամբ Միկթար Աբբալին նմանիս,
Կազմի՞ր քու չորս անկիւնիդ իմաստութեան խորանը:

Նոր վարժարան, նոր գտւառ, նոր տեսարան ցանկալի,
Ազնիւ տոհմէ գեր երամք, գիւցազն մանկունք շնորհալի,
Ամէնը ուսումնասէր, քաջագով, անպարտելի,
Առատօրէն տայ Աստուած շնորհաց ոգին լիուլի,
Գեղարքունին շնորհս ալս երկար կենօք վայելի,
Միջօրեալ լոյս ունենայ եր ընդհանուր սահմանը:

Պէտք է սիրէք մեծ սիրով սա ազգասէր իշխանին,
Ողորմած Տէր անուանել ձեր համայն գերդաստանին,
Կարողէ Սա ձեզ առնել ծանօթ Հօրն և Բանին,
Եւ ժառանգ Աստուածաշունչ անշարժ Կտակալանին,
Ստոր երկրէն վեր հանել ձեր մտաց աստիճանը:

Եւ դուք տեղւոյս բնակիչք, օր ըստ օրէ ջանք արէք,
Ուսումնասիրութիւնը մեծ սիրով յառաջ բերէք,
Մինչ արեգակն ընդ ձեզ է, թանձր ամպն 'ի բաց վարէք,
Երկրագործին նայելով մէկ ժամանակ համբերէք,
Հուսկ յետոյ պտուղները ամբարելու տեղ ճարէք,
Ես լուրը մի ըստ միոջէ տամ հօրը և մանկանը:

Դուք Գեղամեանք հայ տոհմիս, ամբիծ անուն ունենաք,
Ձեր բարեկամ իշխանին հաճոյ բնութիւն ունենաք,
Քաղաքական վարք ու բարք՝ թանգ կեցութիւն ունենաք,
Առատօրէն առ և տուր, քաջ հմտութիւն ունենաք,
Շնորհաց ոգին տայ Աստուած, ճոխ քննութիւն ունենաք,
Հոգեոր կերպով գիմէք Յիսուսի փրկութեանը:

Քե'զ, քաջագով իշխանիդ, տացէ Աստուած ամք կենաց,
Եւ լինի վասն Յիսուսի ներող քոյոց յանցանաց,
Ուսումնաբանդ լինի ամենընտիր գերիմաց,
Ծառալութեան նամակս առ պատուելիդ անմոռաց,
Հայցեմ՝ լինիս Շիրինի ստոր վիճակին գթած,
Կարեաց չափով տեղ տուի ազգասերիդ հրամանը:

ԾԱՅ

ԵՐԳ, ԺԼ, (բայ լո լո - ը)

Ով վարդ ու լիլիֆար, մէկ բացուի սարէսար, առ քեզ
գիմէ աշխարհ, — աշխարհի միջին չունիս բարեբար, ծագմանն
արեւու դէմքդ է յարմար, անպատմելի գեղեցկութիւնդ եար,

Երբ գովաբանեմ, ով կանի ազբար, — ազբար արած եմ պատ-
մութիւնդ, պսեմ բերանով, պայծառութիւնդ յայտնի անեմ մի
մի նշանով, ձայնդ օրինակ երգարանի քաղցը այ նմանով,
գովքդ ամենայն տեղ տարածեմ բառով ու բանով, — բանով
ասի բուրդ, խնդացս տխուր, ինձ ալրում է հուրդ, երկայրի
է սուրդ, — սուրհանդակի պէս դու, սուրդ ջանովս դու, գե-
ղեցկութեանդ քու՝ մի թողուլ արզու, — արզու մի թողուլ
ինձի սիրահար, պարգևեա 'ի քէն ճար, թող չի մնամ անճար:

Անճար մնալս չի պատկանի քեզ, քեզ մուշթազ է Փա-
րէժ կամ 'ի Փարէզ, վախտ վախտ կամեցիր այցելութիւն մեզ,
մենք էլ կամենանք առատութիւն ձեզ, — ձերդ մեծութիւնն
աւելի և հոչակաւոր շատ, տեսդ կարօտին արժանացն, մի
թողուր աղքատ, ով վարդ մանուշակ համասիբւու իմ, քաղց-
րութեան արմատ, անպատմելի սէրդ սիրահար, ինձնում է
հաստատ, — հաստատ կայ յարաժամ, յայտնում չէ քեզ ան-
գամ, քեզ աղերսանս տամ, ինձ մօտ արի մի գամ, — մի գամ
մօտս արի, ինձ ճառալ համարի, հայցուածս կատարի, Աստո-
ւած տայ քէ բարի, — բարի կամեցիր, շնորհալի ճարտար, կար-
ծիք չունենաս չար, այս սէրը չի վատթար:

Վատթար սէրերին չունի ժամանակ, անշէջ հուր է՝ ան-
հանգչելի կրակ, հետևողներին կայրի բովանդակ, վարզն ու-
սոխակը առ քեզ օրինակ, — սոյն օրինակի վատ սէրերը միշտ
ունի վնաս, բայց լաւ սիրոյ օգտաւետութիւնն անչափ ու
անհաս, սէրիս նայելով՝ դու կարծիքս պէտք է իմանաս,
սիրտս սիրովդ խոցված է գիփ, թէ մարթ է՝ բանաս, — բա-
նաս դու ձեռովդ, կամքովդ ու սիրովդ կամ դեղ ու ճարովդ,
գիւրին հնարովդ, — հնար դու, սիրական, գեղատուի նման, ով
աստղ առաւօտեան, լոյս արև ծագման, ծագմանն արևու կա-
րապետաբար, լոյս տուր մեզի համար, չի հանդիպի խաւար.

Խաւար մնալս եղեւ բաւական, արտասվելով՝ աղերսում
եմ ալսքան, սէրդ ինձի համար բաժակ է մահուան, ես կեն-
դանութեան միթէ չեմ արժան, — արժանի արա ինձ քու տե-
սոյդ, առողջութիւն տուր, ովք բարձրահամբաւդ աշխարհի ան-
մահութեան աղբւը, պըռունգներիցդ միշտ բղխում սառնա-
տեսակ ջուր, կաթիլ մի ծարաւիս կամեցիր, մի՛ չարչարիլ
զուր, — զուր ինձի դուշատ վախտ, վարկանեցիր անբախտ, դու
շնորհալի անյաղթ. ես անմիտ ապերախտ, — երախտիքդ ինձ
շատ, վասն էր արի՛ գանգատ, դու վեհ իրաւադատ, ես ծա-
ռայ հարազատ, — ծառայ Նիրինիդ միշտ անմիտար, տանջիլ
մի՛ չարաչար, թագ մարդարիտաշար:

○

ԵՐԻ. ԺԹ. Գոված առ Խուռակի Տէլին:

Հինգ հատոր աշխարհումը դու մին հատ ես, Խոկուհի;
Կամ ինձ համար մէկ քաղաք Աշտեշատ ես, Խոկուհի,
Չեմ հեռանալ սէրիցդ՝ որքան ատես, Խոկուհի,
Որովհետև դուն բարեբեր արմատ ես, Խոկուհի,
Յօժար եմ, ինչքան սիրով ինձ նախատես, Խոկուհի:

Նղարշապատ գլուխդ թուխ ծամերով զարդարած,
Կամարակապ ունքերդ է Սրարչի յարմարած,
Ով տեսիլդ տեսնում է կարծում է նոր արարած,
Մանելնտիր խօսքերդ մարդարիտի պէս շարած,
Կատարելութեան հոգւով միշտ առատ ես, Խոկուհի:

Լաւ յարին է գոյացած՝ անբիծ կաթով սնուած ես,
Քաղաքական մտքերով յատուկ գովարենուած ես,
Մէկ արքայանիստ քաղաք, կամ գեղահրաշ շինուած ես,
Ծածկագիտին ձեռքովը ինձ համար նշանված ես,
Չես կարող ինձմէ սէրդ դու անջատես, Խոկուհի:
Նորհալի պըռունց ունի՛ս է զառնաւուխտ յարմարող,

Զդաստ բարոյականդ գործ նորատես հնարող,
Հանճարեղութեան հոգին զուարճութենէն վեր սիրող,
Ամենայնի գոհ վիճակ պարկեշտ հոգի համբերող,
Շատերին ընթացզովդ իսկ խրատես, Խոկուհի:

Ես սիրաբան՝ գու ինձի սիրոյնամակ ես դառել,
Անգութ միջոցներովդ սրտին կրակ ես դառել,
Կենաց ծառս կտրելու համար դանակ ես դառել,
Անմխիթար Նիրինին գիրք ու առակ ես դառել,
Ո՞վ գու, մինչ երբ ցաւերս չի փարատես, Խոկուհի:

○

ՄԵՐՓ Ի. Առ Սէր ու նոն: ՊՊԸ

Արի՛ իմ լոյս անշամանդաղ, Խոկուհի,
Եքեղապանձ՝ գեղածիծաղ, Խոկուհի,
Գեղեցկութեանդ բիւր աւաղ, Խոկուհի, յարաց անց
Որ շատերին գրաւված ես վաղ, Խոկուհի,
Ցաւում է քեզ աշխարհը սաղ, Խոկուհի:

Բարձրամիտ ես, բայց մեղադիր չեմ քեզի, նոր առն
Մանկութիւնդ հայելի է իսկ մեզի,
Մինչ այդքան բարձրամտութիւն զի՞ է, զի՞,
Մարդոյ կեանքը նման է մէկ երազի,
Մաշող կրակիտ, գոնէ, տուր շաղ, Խոկուհի:

Դեռ թերի ես, չես կատարեալ, ինչ անեմ,
Ցաւողներիդ չես տեղիք տալ, ինչ անեմ,
Չունես ինձ մօտ գնալ ու զալ ինչ անեմ,
Դու քաջարախտ, ես բիեկըալ, ինչ անեմ,
Ունքերդ միշտ ինձ վրայ թաղ, Խոկուհի:

Ասում ես՝ իմ ինչ լինիլս, քեզ չէ՛ փոլթ,
Բայց ցաւում եմ ամենալաւ համբաւոլդ,

Տեսնում ես անլարմարը լարմար տեսուդ,
Քու արշալուսով բաց էլած վարդ սիրոդ, Սոխակ դառնայ, երգելով տաղ, Խոկուհի:

Արի', մի տանջիլ չարաչար Շիրինին,
Սիրոդ թողալ մի' անհնար Շիրինին,
Մինչ երբ թողաս անմխիթար Շիրինին, Տուր առատօրէն տեղ ու ճար Շիրինին,
Էլ մի' ցանիը վէրքերին աղ, Խոկուհի:



ԵՐԳ. ԻԱ. ԳՈՎՔ ԱՌ ՍԻՐԱԿԱՆ.

Ել քեզ գովեմ, սիրուհի, գեղեցկութեան արքայ ես,
Երանի' քեզ մօտ լինիմ՝ ինչ կամենաս հրամայես, Դուր առատօրէն տեղ ու ճար Շիրինին, Տուր առատօրէն տեղ ու ճար Շիրինին,
Ազնիւ ու անգին սէրդ պէտք է ինձմէն չի խնայես:

Փոխարքայի պարտեզին՝ էլ ով նման, դու նման,
Զինու եկած հալվեզին՝ էլ ով նման, դու նման,
Արքայանիստ Փարէզին՝ էլ ով նման, դու նման,
Գիտութիւնով հանճարեղ, համբաւով գերակայ ես:

Վարքդ ու բարքդ համեստ՝ դու մին խոնարհ գառի պէս,
Թանգագին ես մխակի, կինամոնի ծառի պէս,
Հովուապետի բարելից նորատունկ անտառի պէս,
Կամ եթէ մին համեմատ Արարչատունկ բաղչա ես:

Վարսենիկ Աղուանուհին քեզի նման չի' էլած,
Քու չափ գիտուն, կատարեալ, ազնուական չի' էլած,
Թանգագին անուններդ գեռ Վարստան չի' էլած,
Խոկ Հայոց աշխարհումը մէկ հատիքա անտիքա ես:

Ամեն մարդու, աչքի լոյս, մի' բարեկամ անուանիլ,
Որովհետև միշտական չի' ուզածիդ պէս լինիլ,
Լաւ նկատես Նիրինին ձեռքիցդ թող չես անիլ,
Ես միայն անօգնական, դու անձնիշխան սուբա ես:



ԵՐԳ. ԻԱ. ԱՌ ՍԻՐԵԼԻՆ

Դուշա ջան, քու ցանկալի գեղեցկութիւնդ է գովելի,
Քաղաքավարութիւնդ, խելք ու անունդ է գովելի,
Մանաւանդ ազնիւ ու հանդարտ բնութիւնդ է գովելի,
Դու հարազատ ազգէ ես, ընտիր արիւնդ է գովելի:

Գիտում եմ, որ՝ սիրելի, ուրիշի մէր տալ չգիտես,
Զափազանց զարդարվելովդ, տեղէ ցտեղ մանգալ չգիտես,
Քաղցը ու պարկեշտ հոգի ես, աւել դալմաղալ չգիտես,
Մէկ ծառ ես Եղեմական, բարի արդիւնդ է գովելի:

Գիտում եմ, որ լաւութեանս փոխարէն չար չես անիլ,
Աղաղակս լսելու համար սիրտ քար չես անիլ,
Քու սէրիդ աղեղովը ինձի նետահար չես անիլ,
Զուր մի' մաշվիլ, սենեակս եկ ասութիւնդ է գովելի:

Զեմ սիալվիլ, եթէ քեզ գեղեցկութեան արքայ ասեմ,
Նեղութեանս՝ աւետիք, կենդանութեանս՝ ընծայ ասեմ,
Եսթերին համանման ոս հիմա քեզ ներկայ ասեմ,
Մարդաշահ, իաղաղարտ խօսակցութիւնդ է գովելի:

Քեզանից քիչ վախում եմ, գէշ, հարկաններ շատ ունիս,
Անունդ ստոր քցելու վատաբերաններ շատ ունես,
Վարք ու բարքդ մի' փոխիլ, դուն գովասաններ շատ ունես,
Շիրինի մօտ քու կատարեալ կեցութիւնդ է գովելի:



ԵՐԳ ԻԳ. ԵՐԳ ԱՌ ՍԻՐԱԿԱՆՆ.

Կարդում եմ, Վարդուհի, քու անունդ սոխակի նման,
Անբախտիս վայ եմ տալիս պանտուխտ ծիծեռնակի նման,
Ո՞վ արդեօք փափագ ունի իմ սրտիս փափագի նման,
Քեզ՝ փափագիս լրումը, պատմեմ հեղինակի նման,
Քու սէրդ թանգագին է ինձ մօտ ժամանակի նման,
Ժամանակիս մաշում է սուսեր կամ նիզակի նման:

Վարդուհի, երբ քու ազնիւ ու թանգագին սէրն ունեցայ,
Թիրզալի ալրիութեան առաջին գիշերն ունեցայ,
Կամ այն ինչ Տելեմաքի անմենտոր պատկերն ունեցայ,
Սրտումս աներեւոյթ Եւխարեան սուսերն ունեցայ,
Ծով սիրու գրաւ տուի իմ անձնս նաւակի նման:

Պահարան չեմ քու սիրոյդ, կամ առ, կամ ինձ տուր սեպհական,
Ասա ինձ, սէր անուն ում է դառել սուր սեպհական,
Քու սիրոյդ ինձի գրաւ մի անուանիլ զուր սեպհական,
Չունենամ այսուհետեւ ինձ սիրոյ մէջ լուր սեպհական,
Ես ազատ լինիմ, սէրդ մնայ միայնակի նման:

Վայ չէ ինձ, որ քու սէրդ էսքան անարգեմ, սիրական,
Անգութ, անլուս կարօտոյտ միթէ ծախուած չեմ, սիրական,
Ելի պէտք է աղաչեմ, խնդրեմ, աղերսեմ, սիրական,
Թող սէրդ ինձ խնալէ, թէ սիրելոյդ իմ սիրական,
Լիցի ինձ ծարաւելոյս ջուր՝ չէ թէ կրակի նման:

Քու սիրոյ չափ, անիրաւ, սէր երանի ես ունենամ,
Որ նա քեզ ստիպելով, ունենաս ինձ վերայ խնամ,
Թող լիցի քեզ ազգարար գոյն ու դէմքս, բարեկամ,
Բարեկամ՝ ինչ բարեկամ, որ բարեկամութեանդ լուսամ,
Աւաղ անճար Շիրինիս բախտն է ներհակի նման:



ԵՐԳ ԻԳ. ԵՐԳ ԱՌ ՍԻՐԱԿԱՆՆ.

Ապրիս, Համասփիւռ, գովական աղջիկ ես,
Համասփիւռից ազնիւ ու գեղեցիկ ես,
Թէւ հասակաւ փոքր ինչ պզտիկ ես,
Բայց հաճողիդ իսկ քաղելու ծաղիկ ես,
Խելքով ու դէմքով ահա մէկ հատիկ ես,
Նախշուն կաքաւ, զարդարուած աղունիկ ես:

Ես մին սոխակ, դու վարդարան ինձ համար,
Կարմիր վարդի ես համանման ինձ համար,
Առիթ կենաց, օր բարութեան ինձ համար,
Օրը մէկ անգամ տեսարան ինձ համար,
Ես քեզ համար՝ դու, սիրական ինձ համար,
Էլ ի՞նչ ասեմ, հոգի ես, անուշիկս:

Ո՛րքան ընտիր մալրական ուսմունք ունիս,
Զարմանալի, գովելի մատունք ունիս,
Փոքրիկ պարտէզ՝ զանազան բերմունք ունիս,
Ակնախտեղ դէմք, բարի վարմունք ունիս,
Խնդրէ, ինձմէ՝ որքան իրաւունք ունիս,
Խնդրելուդ չափ ես առաւել քաղցրիկ ես:

Թող իմ կամքը լայտ լիցի քեզ նամակով,
Անծախ սէրդ ինձ է տուած մուրհակով,
Պայծառ կենացդ արև կարդամ բաժակով,
Ներելի ես Շիրինի մօտ հասակով,
Թող Վաչականն ինձ չի խաբի վիճակով,
Գուրգէն սիրոյս մօտ լատուկ Վարսենիկ ես:

ԵՐԳ ԻԵ. ԵՐԳ ԱՌ ՍԻՐԱԿԱՆՆ.

ԱՌիս, իմ փոքրիկ բուրաստան, ափսոս անջուր մնացիր,

Գարունն մերձեալ ժամանեաց, արդեօք դու ուր մնացիր,
Մի անդամախն քուրձ զգեցեալ, սեափետուր մնացիր,
Դու ի միջի աղբերաց ծարաւի հիւր մնացիր,
Վատահամբաւ, տմարդի, վրիպալուր մնացիր,
Որովհետև անթառամ գանձիցը կուր մնացիր:

Ահա յարեաւ մէկ տիկին, որ Եւրոպ անունով,
Կամեր զքեզ տեսանել անչափ կարօտութիւնով,
Զուր համբաւոյդ եկն ի տես քանի սպատրաստութիւնով,
Սիրամարգով, սոխակով, երգով, ուրախութիւնով,
Զէին բացուած, զօրացած ծաղիկներդ պարզ գունով,
Գլխովին անարգվեցիր, ճարակտուր մնացիր:

Դու ջրասուզ անունով մէկ պահպան ունէիր,
Նախատինք տեսնելով, իսկոյն եղև տարագիր,
Հստ ասութեան Արարչին, ուր իմաստուն, ուր դպիր,
Եդ մթնազգաց հոգիէդ դու ամաչի՛ր, դու երկի՛ր,
Ի՞նչ շահեցար նիրհելով. ուրեմն արի՛ արթնացի՛ր,
Լեր ալս դարին նմանող, չասեն' թէ զուր մնացիր:

Ա. ի բուրաստան՝ բուրաստան, տէր ունենաս երանի՛,
Ծաղիկներդ վարդերդ էդքան անհոտ չ'լինի,
Վերատեսուչ պաշտպանդ է հասակաւ պատանի,
Վերոլիշեալ տիկինը գարնան ոգիք շատ ունի,
Խնդրէ յուսով՝ նամակով, իցէ թէ քեզ հասանի,
Նիրին, քու անձիդ համար զիարդ դու սուր մնացիր,

ԵՄՊ Ի. Վահանայր Արքունական Կուսական Շնորհիւն:
Յանձնանես վարդապետ, ճաշ պատրաստելով վասն մեաբանից, լայն գովաստու-
թեան ընկալու առ ժամ ի 10 Յունիսի 1854 ա. ի Վահանապետ:
Ա. ի, Յովհաննէս Վարդապետ, ի՞նչ ասեմ ձեր աքլորին,
Արի՛ ճշմարիտն ասա, որքան էր սրա տարին,

Ա. աղ ձեր հարկութեանը, ամօթ գըա կատարին, ու ապ
Դեռ ճաշը չկերջացած աշչեքը օջաղն արին, ու այդ ոչ աչ
Խստակեցին աքլորը մաղնձոյ մէջը դրիւ. Ս
Մինչև էս տեղն հասաւ, որս փափակեցինք ֆօնարին: պազմ
մարտիրաց պատճի ծաւու հմտ փոխ նո քանչ

Պղինձը ջուր լցնելով, կուժ ուր գիւիւմ չի մնաց, ու
Աքլորի յոյսն ունելով, ով արդեօք ծում չի մնաց,
Բաղչումն արքատ, վանքումը սպիտակ մում չի մնաց,
Սովածութեանն լաղթուելով լսելքս ինձնում չի մնաց, ով
Երբ շըհանոց մումն իջաւ, ասենք, թէ հում չի մնաց, ով
Միք վոազել, համբերէք, աշչեքն էս լուրը բերին:

Վարդապետէն հարցը աքլորի թուականը,
Ասաւ, իմ պապս էր գիտում դրա կենաց սահմանը,
Երբ նոյ իր որդիքովը մտնել ուզեց տապանը,
Էս աքլորն էր տապանի ձախ տալողը՝ դեսպանը,
Էն վտանգիցն ապրելով, հիմա մտաւ դազանը,
Զանկանում էր թաքունիս առարկալից երկարին:

Տեսան կէս գիշեր դառաւ, պղնձիցը հանեցին,
Կտրեցին մէկ հատ թէկը, կերան հում անուանեցին,
Ճարահատեալ հաց բերին, աքլորը բաժանեցին,
Որքան կերան, լիացան, էնքան գովաքանեցին,
Հնտեղ երես առ երես ինձ ուղղախօս շինեցին,
Մէկ էս տեսակ տեսարան քիչ կը ճարվեր աշխարհին:

Միսը երեւք չկերպաւ՝ էնքան, որ անպիտան էր,
Մահմուզները թզաչափ՝ մորթին գաբաղի բան էր,
Ունեցած սակորների ամեքը մէկ գերան էր,
Թէւ սրա գլուխը փթից պակաս կը լինէր,
Բայց ճնազը մէկ աղքատ տան համար նէրտիվան էր,
Պահարաններ՝ մաղազէք կար էս աքլորի փորին:

Քու սրտացաւ ըլնելը, ով դու, լիւտոյ իմացան, և քառական թէւ էն քիչ ատենին մասնաւոր ուրախացան, մի ուշած ամբ Աքլորի գոլվաթիցը շատերը հիւանդացան, ուստի ու մձամբան Միջոցը երկարելով, հազիւ որ առողջացան, որժու մէ մշտի Տեսալ, որ իմ լոյսի ինձ տուած վիշտքը բազմացան, Միանդամայն տուր տուի ինձ վստահութեան լարին:

Յալտ լիցի վեհանձն հոգի տեղակալ Սըբազանին, Որ Յովհաննէս Բաբունին չմնաց իր պալմանին, Զտէր Աւետիս քահանալին, ազգաւ Արարատեանին, Երաշխաւոր կամ վկալ տուաւ Աշըղ Շիրինին, Մէկ գառը ինչ էր արդեօք, աւաղ ձեր աստիճան, Խոստմունքի կատարումն է ամենալաւն ու բարին:

ԵՐԳ. Ի. Բ.

Վարժարանէն մէկ աղջիկ, էւր մօր տունը գնալիս, Տեսաւ մէկ ձայոց տղալ, որ գութանիցն էր գալիս, Վերոլիշեալ աղջիկը՝ երբոր տեսաւ տղալին, Տղալին ետ կանչելով, մտիկ տուաւ պատկերին, Ստիպելով աղջկան հոգին՝ և սէրն, ազգային, Որովհետեւ սեազգեաց տեսաւ զտղալն թանգագին, Արեգակով այրուած՝ տօթով, խաշուած խղճալին, Քնահատութեան ձեռքից, արեան աչօք էր լալիս:

Ո՞մ տղալ ես, հարցրաւ, կամ ինչ տեղ է ձեր տունն, Կամ ինչ օգուտ կը բերէ ձեր հողագործութիւնն, Տղալն զոհացնելով պատմեց իւր կեցութիւնն, Իւր գութանի փլաւն, իւր քաջ եզանց անունն, Ընկերաց հետ կոււիլն, ուշունցն, բարկութիւնն, Երբ անթերի ունեցաւ այսքան տեղեկութիւնն, Տղալին ափսոսալով՝ Արամին վայ էր տալիս:

Տղալին տամնուհինք ամաց էր, երբ պատահեց աղջկան,

Զէր լրացած դեռ աղջկան ամաց երկոտասանն, Արի՝ գնանք, ասելով, իմ մայր ուսումնարանն, Այն կենսաբեր պարտէզն, հօգիչահ բուրաստանն, Տղալն՝ տղալ լինելով, երբ որ լսեց այս բանն, Իւր բարկութենէն անգամ չէր բաց լինում բերանն, Թող, գնամ, այդ խօսքերդ չէ իմ երբէք հաճելիս:

Լաւ տղայ՝ ազնիւ աղայ, հիմա պէտք է ուր գնաս, Խրատատու աղջկանէս տեսար, արդեօք, մի վնաս, Լաւ օրերդ անց կացան, մինչեւ լերբ չզգուշանաս, Երանի՝ թէ իմ հետո մին փոքր տեղ ընթանաս, Տես ինձանից դու որքան քեզաշահ բան կիմանաս, Տղալն կասէ աղջկանն, վախում եմ շատ ուշանաս, Յետոյ պատասխան տալն դժուարին է մաճակալիս:

Տղալին աղջիկն ասաց, այսօր է քոյ թանգ օրդ, Անմտութիւնդ, հօգի, տրտմութիւն է քոյ մօրդ, Պարսաւանք է ողջ ազգիդ և նախատինք քըւորդ, Ամենազուրկ, ողբալի, թանձրամիտ մեծ եղբօրդ, Յաւեմ, դարձեալ՝ զարմանամ, ծիծաղ կրկնեմ քոյ հօրդ, Ուր է քոյ երաշխաւոր կնքահայրդ՝ կնքաւորդ, Երբ Յիսուսի բատեանն քոյ տեղակ խօսք էր տալիս:

Ուամիկ տղալն, իւր մէջն Հայկալ արիւնն ունելով, Զգուշացաւ, արթնացաւ, խաւարն խսպառ թող տալով, Մտաց քողն վերացաւ, յաղջկանէն խրատուելով, Վարժարանին մօտացաւ, ուսուցչի հետ խօսելով, Մտաւ յուսումնարանն, մէկ նոր արարած գոլով, Զուգ մանկոնց հանգամանքն ազգիս օրինակ տալով, Պիպիզ եղէ ականջաց ես իսկ Շիրին ցաւալիս:

ԵՐԳ. Ի. Բ. Խ Ր Ա Ց.

Տղալն՝ տղայ, հարսանեաց տունն քեզ տուն չի' լինիլ,

Հարսանեաց տուն սիրողի սիրտն գիտուն չի լինիլ,
Ժամանակն քանի որ ձեռքիդ է միշտ ջանք արա, և յամ
Սմեն ատեն քոյ բախտ, ինելքդ արթուն չի լինիլ:

Աստուածաշունչ գիրքն քեզ և քո տանդ գործ շինէ,
Նրանով սնուած տունն անզօր, անհիմն չի լինիլ,
Սուրբ Հոգւոյն յանձնութիւն դու քո բոլոր մտքովդ,
Ուրիշ կերպով քեզ սրտի փոփոխութիւն չի լինիլ:

Հոգի է Աստուած, կուզէ հոգով երկրագութիւն,
Ով մարդ, նրան լոկ կերպին պաշտողութիւն չի լինիլ,
Վերոյիշեալ մատենի հեղինակն է Սուրբ Հոգին,
Են աւել զքեզ փրկելոյ կարգ կանոն չի լինիլ:

Թագաւորին ճանաչէ՛, զիւր ժառանգն պատվելով,
Ատենակալներովն միջնորդութիւն չի լինիլ,
Մարդն միայն մարդ եղած բանիւն փրկել կարէ,
Թէ ոչ, իւրեան ձեռքովն մէկ օգնութիւն չի լինիլ:

Տասնթարնեալ պատգամի երկու գերազնիւսէրն,
Ով չունենալ, նորանում ճշմարդութիւն չի լինիլ,
Ով է վերստին ծնած, կամ ով ներսէն Հրեալ,
Կամ թէ զիարդ լոկ լային կենդանութիւն չի լինիլ:

Ով ոք Աւետարանի միջօրեալ լոյսն ունենալ,
Մինչ հազար ազգ նորանում անօթութիւն չի լինիլ,
Հաւատն ունի իւր մէջն շնորհաց հոգին անթերի,
Հաւատն ինձ օրինակ, արդարութիւն չի լինիլ:

Ժամավաճառ մի լինիլ, մանկութեանդ նայելով,
Մահուան օրէն իւտու—քեզ այցելութիւն չի լինիլ,
Եիրին, դու ինքնին գիտես քո գիշերայնութիւնդ,
Մահուան մէջն կենաց հետ հաղորդութիւն չի լինիլ:



ԵՐԳ. Ի ՊԵՐԱՅ ՍՈՒՐԲ ՍԻՐՈՅ:

Սիրոյ եղբայր, ինձ մտիկ տուր, խօսքիս գըութիւնն է սէր,
Սուրբեանս լրումն է սէր, աստ եղած կանոնն է սէր,
Նախատանացն յօժարամիտ մահին անձնատուր եղե,
Աւետարանին նայելով. իմ Փրկչիս անունն է սէր:

Սէրն է գլուխ պատուիրանին և օրինաց լրումն,
Մարգարէից և նախահարց ասութեանց կատարումն,
Համայնից հաստատութիւնն, անկեալ բնութեան ներումն,
Տասնաբանեալ սուրբ խրատուց բովանդակութիւնն է սէր:

Սիրոյ մէջն կեանք եմք տեսնում, իսկ ի մեղս—վիշտ ու մահ,
Սէրն օտարաց խնամարկու և լնկերաց անխնալ,
Ներող, գթած, երկայնամիտ, օգտամատուց, բազմաշահ,
Այն վերստին ծնանիլն՝ սուրբ նորոգութիւնն է սէր:

Սէրն հանդարտ՝ բարենախանձ ամենալի դոհ վիճակ,
Անչարաչար կեանք կը վարէ ազատօքէն անփափագ,
Սիրով նաեալ քոյ Եիրինիդ, ով Դու սիրոյ հեղինակ,
Վասն զի Սմենազորիդ մեծ այցելութիւնն է սէր:

ԵՐԳ. Լ. Ա Պ Պ Ա Խ Գ Ո Ւ Ա Մ Ա Շ Տ Ա Խ Ե Ր Ա Յ :

Ինձանից ինչ տեսար, կամ ինչ լսեցիր,
Որ իսպառ հեռացար, պատուական արծաթ.
Ինչ միջոց ճարեցիր, ինչ սկսեցիր,
Կամ ուր գտար անգութ քեզ նման արծաթ:

Ահա քսան ու եօթն տարիս լրացաւ,
Քսան տարին ամբողջ քեզ ետու գրաւ,
Երբեմն բազմաշխատ, երբեմն ճարաւ,
Եղէ անմիտ սէրոյդ սիրաբան, արծաթ:

Եթէ գուշես բախտն, ասա՛, քեզ գովեմ, Յ
 Դու ով ես, վասն զի գիտեմ՝ ես ով եմ,
 Թէ որքան ձեզանով ես ապահով եմ,
 Զեզ գովութեան արժէք տամ այնքան՝ արծաթ:
 Զէ չէ, դու բախտն չես, նորան մօտ բան ես,
 Կարծիքով քեռողդի, մօտ ազգական ես,
 Դու քեռուցդ աւելի փախատեական ես,
 Երկուսդ էլ մէկ մէկու համանման, արծաթ:
 Ո՞հ, մէրդ որքան առատ, որքան ահագին,
 Ունէր անթերի կորստեան որդին,
 Արժէք համարելով զքեզ քո Արարտին,
 Միասին ստացայք անարդանք՝ արծաթ:
 Ա՞խ, ինչ ասեմ, շատ անբախտ ես, անիրաւ,
 Գըաւներիդ մինչ Երբ լաղթես, անիրաւ,
 Անհարազատ և ապերախտ ես, անիրաւ,
 Ալոր ինձ մօտ, էգուց ալլոց տան արծաթ:
 Տուր իմ վերոլիշեալ քսան տարին, տուր,
 Կամ քո ինձ խոստացած առատ բարին, տուր,
 Տար այս իմ գանգատն սաղ աշխարհին տուր,
 Տես՝ որիս կ'անուանեն անպիտան, արծաթ:
 Մէկ անտիքա գտի հազար տարեկան,
 Պատկերն անվնաս, զիրն անխափան,
 Իսկ յան աեզին տեսի մէկ հատ գերեզման,
 Չունէր ինչ ազգարար մէկ նշան, արծաթ:
 Հիմա, եղբայր, ես մարդ մահուան ենթակայ, մեջոյ
 Իսկ դու տարով լցուած ամեն կէտսերկայ, յա ուինս քը

Կ խնամութիւնդ մինչև որ ինձ գայ,
 Ն թոռս կ'ստանալ թոռ իրան, արծաթ:

Քո մէկդ ինձ մօտ երկու չդառաւ,
 Լեռքս ում որ տուաւ, կրկին յետ չառաւ,
 Մէկն աշխատելով, վազելով մեռաւ,
 Մէկին յանկարծ տուիր աստիճան, արծաթ:

Տօ անհոգի՝ անգութ, քանի մի քանի,
 Արի, ինձ էլ քեզ բարեկամ անուանի,
 Ե՞կ, այս ասացուածոյս հետ միաբանի,
 Ո՞չ դու մնայ անմարդ, ոչ ես—անարծաթ:

Կանչէ իմ դրացիս, գոշէ իմ տունս,
 Քննելով ստուգէ ողջ կեցութիւնս,
 Թէ կարեն վկայել շուալութիւնս,
 Թո՞ղ՝ քոյ տեղակ ինձ պատասխան տան, արծաթ:

Երանի, թէ լսելիքդ բանալիր,
 Դու էլ ինձ պատասխան տալ ջանալիր,
 Թէ Նիրինին հաւատարիմ մնալիր,
 Ունէիր դու դրուստ գովասան, արծաթ:



լուս և ամպ ինչ ու ամպ ինչ ամպ ինչ
: Ելածոյ ըմբի առջ լուս ամպ ինչ ամպ

առարձ առջ առջ ամպ ինչ ամպ
առարձ առջ ամպ ինչ առարձ առջ ամպ
առարձ առջ ամպ ինչ ամպ ինչ ամպ
: Ելածոյ ըմբի առջ լուս ամպ ինչ ամպ

ամպ ինչ ամպ ամպ ինչ ամպ ամպ
ամպ ամպ ամպ ինչ ամպ ինչ ամպ
ամպ ամպ ամպ ամպ ինչ ամպ ամպ
: Ելածոյ ըմբի առջ լուս ամպ ինչ ամպ

ամպ ամպ ամպ ամպ ամպ ամպ
ամպ ամպ ամպ ամպ ամպ ամպ
ամպ ամպ ամպ ամպ ամպ ամպ
: Ելածոյ ըմբի ամպ ամպ ամպ ամպ ամպ

ամպ ամպ ամպ ամպ ամպ ամպ
ամպ ամպ ամպ ամպ ամպ ամպ
ամպ ամպ ամպ ամպ ամպ ամպ
: Ելածոյ ըմբի ամպ ամպ ամպ ամպ ամպ



առարձ առջ ամպ ինչ ամպ ամպ ինչ
առարձ ամպ ամպ ամպ ինչ ամպ ամպ ինչ
առարձ ամպ ամպ ամպ ինչ ամպ ամպ ինչ
: Ելածոյ ըմբի առջ լուս ամպ ինչ ամպ



Մահտեսի-Յակոբեանցի տպարանում ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ հայերէն, ռուսերէն և թուրքերէն լեզուներով, որոնք կատարվում են ձեռնտու գներով և լաւ կերպ ։

Հասցե.

Ի. Ռյասա, Տիպոգրաֆիя Մահմետականուա.

ՀՀ Ազգային գրադարան



NL0342313

